ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.10-2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. մարտի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝

- «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.10 կետով նախատեսված **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.4.1 կետի պահանջներին:

Մասնավորապես՝ հայտով պահանջվող՝ Armenia.travel վեբ կայքի համար անգլերեն լեզվով տեքստային բովանդակության 30 բլոգ փոստերի ստեղծման փոխարեն ծրագրով առաջարկվել է 25 բլոգ փոստ, անգլերեն լեզվով առնվազն 25 մամլո հաղորդագրության (press release) կազմման փոխարեն ներկայացված է 12 մամլո հաղորդակցություն: Միաժամանակ, ծրագրով և ֆինանսական նախահաշվով ներկայացված չափաքանակները չեն համապատասխանում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Էմ Էյ Էլ Վի մենեջմենթ գրուպ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը:

2. **«Տեքստային բովանդակության ստեղծում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը լուծարել և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____